Բատոլա ջան, բատոլա

Մերս կերավ մռու սոխ,
Բատոլա ջան, բատոլա,
Ընձի բերավ խաղ ըսող,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա)

Մերս կերավ եղեղեն,
Բատոլա ջան, բատոլա,
Ընձի բերավ հրեղեն,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա)

Մանդրիկ թփիկ իրեքնուկ,
Բատոլա ջան, բատոլա,
Աղջիկ տղին դարդ ու խոց,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա)

Քան լուսինն ամպի տակով,
Բատոլա ջան, բատոլա,
Սիրտս կերես կրակով
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա)

Նոր էկար, բարով էկար,
Բատոլա ջան, բատոլա,
Կանաչ կալերով էկար,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա)

Բարակ մեջքիդ յոթը ծամ,
Բատոլա ջան, բատոլա,
Սրտիդ միջին ունես կամ,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա:)

Ելա երթիկ, աշեցի,
Բատոլա ջան, բատոլա,
Ջահել կյանքս մաշեցի,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա:)

Աղչի ծամդ ծիրանի,
Բատոլա ջան, բատոլա,
Քամին տա թել թել անի,
Շաքար ու շիր բատոլա:
(Շաքար ուտող շան տղա:)

Սարերը կապուտ ծաղիկ,
Բատոլա ջան, բատոլա,
Ոչխարը երկան աղիք,
Շաքյարը շարբաթ-օլա:

Ուր որ գնաս, հետըդ եմ,
Բատոլա ջան, բատոլա,
Կըծած խնձոր ձեռիդ եմ,
Շաքյարը շարբաթ-օլա: